



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

13.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/06

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) քննելով «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից 29.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/06 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Շինարար-97» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Շինարար-97» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 29.05.2017թ. բողոքով հայտնել է, որ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Վանաձոր քաղաքի, Պ. Սևակ փող. 49 շենք հասցեում շինվերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԱ-ԲԸԱՇՁԲ-1» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Շինարար-97» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2017թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ մերժվել է «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ

հայտի վճարման պահանջագրի վրա չկա հաշվապահի ստորագրությունը, հայտը չի համապատասխանում հրավերի հրահանգի 7.3 կետի պահանջներին:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) խախտումներով, ինչը բխում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներից: Մասնավորապես Ընկերությունը գտնում է, որ խախտվել են Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, որի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) հայտի ապահովումը.

4) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ), եթե հրավերով նախատեսված է.

5) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ հայտերը գնահատվում են սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

* Ընկերությունը գտնում է, որ խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, քանի որ «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտի ապահովումը պատրաստվել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Տուժանքի մասին համաձայնագրում առկա է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, իսկ վճարման պահանջագրում՝ ոչ, քանի որ համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու

իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

«Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի հրամանով գլխավոր հաշվապահի համար սահմանվել է, որ նա կարող է ստորագրել հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, բացի բանկային գործառնությունների հետ կապված փաստաթղթերից (վճարման հանձնարարագրեր, չեկային գրքույկներ և այլն):

Բացի այդ Պատվիրատուի կողմից կազմված հայտի տուժանքի մասին համաձայնագրում (հավելված 9) լրացված չեն Պատվիրատուի կողմից պարտադիր համարվող դաշտերը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 45-րդ հոդվածով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 49-րդ հոդվածով՝ Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. Որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԱԱ-ԲԸԱՇՁԲ-1» ծածկագրով բաց ընթացակարգը, որը Խորհրդի 02.06.2017թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

2. Դադարեցնել «ԱԱ-ԲԸԱՇՁԲ-1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2017թ. թիվ 2 արձանագրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.06.2017թ. ժամը 12:20-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը Խորհրդին ուղղված 30.05.2017թ. թիվ 01/01/103-17 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից հայտը չի ընդունվել, քանի

որ այն հակասում է հայտերը պատրաստելու հրահանգի 7.3 կետի պահանջներին: Հայտի ապահովում հասկացությունը իր մեջ ներառում է տուժանքի մասին համաձայնագրի 1.2 կետի պահանջները:

«Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի և գլխավոր հաշվապահի միջև կնքված աշխատանքային պայմանագրի վերջին կետի համաձայն՝ գլխավոր հաշվապահը իրավունք չունի ստորագրելու բանկային գործառնությունների հետ կապված փաստաթղթերը: Այս դեպքում մասնակցության հետ կապված հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը պետք է ստորագրեր միայն տնօրենը, քանի որ վերջինս բանկային գործառնությունների հետ կապված փաստաթղթեր են և գլխավոր հաշվապահը, ըստ աշխատանքային պայմանագրի պահանջների, իրավունք չունի ստորագրելու տուժանքի մասին համաձայնագիրը: Հաշվապահի ստորագրության հետ կապված խնդիրը վերջնական բացահայտվել է մասնակցի կողմից ներկայացված բողոքին կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.06.2017թ. ժամը 12:20-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինվերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԱ-ԲԸԱՇՁԲ-1» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի հետևյալ օրինակելի ձևը.

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N (մասնակցության հայտի ապահովում)	
2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝	
4. Վճարողի բանկը՝	
5. Վճարողի հաշվի համարը՝	
6. Վճարողի ՀՎՀՀ՝	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝ «Հայաստանի ազգային լարիսիվ» ՊՈԱԿ	
9. Շահառուի ՀՎՀՀ՝ 00078217	
10. Շահառուի բանկը՝ ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ	
11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 16048100944900	
12. Գումարը թվերով և բառերով՝	
13. Արժույթը (բառերով և կողով)՝	
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝	
15. Գնման ընթացակարգի ծածկագիրը՝	
16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝— էջ	
19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____ /_____ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____ /_____ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

¹ Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարզադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

3. Հրավերով նախատեսված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 18.ա կետի համաձայն՝ վճարման պահանջագրի «վճարողի ստորագրությունը» ոչ պարտադիր դաշտը ստորագրվում է վճարողի կողմից:

4. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպած «ԱԱ-ԲԸԱՇՁԲ-1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Շինարար-97» ՍՊԸ-ն:

5. Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրի «18.ա. Վճարողի ստորագրությունները» դաշտում լրացվել է միայն «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը:

6. Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, ստորագրվել է Ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.05.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով մերժել է «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության հայտի ապահովման վճարման պահանջագրի վրա չկա հաշվապահի ստորագրությունը, հայտը հակասում է հայտերը պատրաստելու հրահանգի 7.3 կետի պահանջներին:

8. «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի՝ «Ալինա Զանոյանին որպես գլխավոր հաշվապահ աշխատանքի ընդունելու և աշխատանքային պայմանագիր կնքելու մասին» 01.09.2016թ. թիվ 9 Ա հրամանի վերջին կետի համաձայն՝ աշխատողին հանձնարարվող աշխատանքը ներառում է հետևյալը՝ վարել ընկերության հաշվապահությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ստորագրել հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ **բացի թանկային գործառնությունների հետ կապված փաստաթղթերից (վճարման հանձնարարագրեր, չեկային գրքույկներ և այլն):**

9. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Գյումրու մասնաճյուղի կողմից 26.05.2017թ. տրված թիվ 629 տեղեկանքի համաձայն՝ 20.08.2009 թվականից «Շինարար-97» ՍՊԸ-ի նմուշի քարտը «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում հաստատված է մեկ ստորագրությամբ, որի իրավունքը պատկանում է «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Ահարոնյանին:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Շինարար-97» ՍՊԸ-ի 29.05.2017թ. բողոքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 30.05.2017թ. թիվ 01/01/103-17 գրությունը և կից փաստաթղթերը, «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի՝ «Ալինա Զանոյանին որպես գլխավոր հաշվապահ աշխատանքի ընդունելու և աշխատանքային պայմանագիր կնքելու մասին» 01.09.2016թ. թիվ 9 Ա հրամանը, հայտնում է հետևյալը.

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ **հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը**, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի միապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստում նույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Նույն կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերին կից տուժանքի մասին համաձայնագրի 1.2 ենթակետի համաձայն՝ որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և **կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի Քաստատված՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:**

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 14.10.2016թ. «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 131-

Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն, 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն, 2000 թվականի փետրվարի 1-ի թիվ 18 և 2000 թվականի ապրիլի 25-ի թիվ 97 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները»-ի (այսուհետ նաև՝ Կանոններ) 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նույն կարգը սահմանում է հետևյալ վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները՝

1) վճարահաշվարկային փաստաթղթեր, որոնք պարունակում են կարգադրություն դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու, վճարելու, փոխանցելու, վճարումը (փոխանցումը) չեղյալ համարելու վերաբերյալ և (կամ) հաստատում (հավաստում) են ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը՝

ա. Վճարման հանձնարարական,

բ. Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական,

գ. Վճարման պահանջագիր,

դ. Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր),

ե. Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր),

զ. Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր),

է. Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր),

Կանոնների 14-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ սույն կնքով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերում վավերապայմանների լրացման համար գործում են հետևյալ կանոնները.

5) Վճարահաշվարկային փաստաթղթերի վավերապայմաններում կիրառվող «ստորագրություն» վավերապայմանը սույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթում լրացվում է՝

ա. թղթային եղանակով փաստաթղթերի ներկայացման դեպքում պարտադիր դրվում է հաճախորդի ստորագրությունը, **ընդ որում՝ իրավաբանական անձանց դեպքում դրվում**

է իրավաբանական անձի իրավասու անձի (անձանց) ստորագրությունը (ները), իսկ ֆիզիկական անձանց դեպքում կարող է դրվել նաև լիազոր անձի ստորագրությունը,

Նույն կանոնների 22-րդ կետի 1-ին ենթակետի 21-րդ պարբերության համաձայն՝ վճարողի ստորագրությունը հանդիսանում է «Վճարման պահանջագիր» փաստաթղթի նվազագույն վավերապայմանը, որը պարտադիր լրացվում է վճարողի կողմից վճարման պահանջագրի ակցեպտավորման դեպքում:

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպած «ԱԱ-ԲԸԱՇՁԲ-1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շինարար-97» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի ապահովման կից վճարման պահանջագրի «18.ա. Վճարողի ստորագրությունները» դաշտում լրացրել է միայն «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.05.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ մերժել է «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության հայտի ապահովման կից վճարման պահանջագրի վրա չկա հաշվապահի ստորագրությունը, հայտը հակասում է հայտերը պատրաստելու հրահանգի 7.3 կետի պահանջներին:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ **հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը**: Այս տեսանկյունից հորիզոնը արձանագրում է, որ «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի՝ «Ալինա Ջանոյանին որպես գլխավոր հաշվապահ աշխատանքի ընդունելու և աշխատանքային պայմանագիր կնքելու մասին» 01.09.2016թ. թիվ 9 Ա հրամանի վերջին կետի համաձայն՝ աշխատողին իրավունք է վերապահվել ստորագրել հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ **բացի բանկային գործառնությունների հետ կապված փաստաթղթերից (վճարման հանձնարարագրեր, չեկային գրքույկներ և այլն)**:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 14.10.2016թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» -ի

14-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությունը սահմանում է, որ վճարահաշվարկային փաստաթղթերի վավերապայմաններում կիրառվող «ստորագրություն» վավերապայմանը սույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթում լրացվում է թղթային եղանակով փաստաթղթերի ներկայացման դեպքում պարտադիր դրվում է հաճախորդի ստորագրությունը, **ընդ որում՝ իրավաբանական անձանց դեպքում դրվում է իրավաբանական անձի իրավասու անձի (անձանց) ստորագրությունը (ները)**, իսկ ֆիզիկական անձանց դեպքում կարող է դրվել նաև լիազոր անձի ստորագրությունը: Տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է, որ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Գյումրու մասնաճյուղի կողմից 26.05.2017թ. տրված թիվ 629 տեղեկանքի համաձայն՝ 20.08.2009 թվականից «Շինարար-97» ՍՊԸ-ի նմուշի քարտը «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում հաստատված է մեկ ստորագրությամբ, որի իրավունքը պատկանում է «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Ահարոնյանին:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի 01.09.2016թ. թիվ 9 Ա հրամանի՝ գլխավոր հաշվապահը չի լիազորվել ստորագրելու **բանկային գործառնությունների հետ կապված փաստաթղթեր, տվյալ դեպքում՝ վճարման հանձնարարագրեր, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերությանը սպասարկող բանկի համապատասխան տեղեկանքը**, որի համաձայն «Շինարար-97» ՍՊԸ-ի նմուշի քարտը սպասարկող բանկում հաստատված է «Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությամբ, գտնում ենք, որ «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱԱ-ԲԸԱՇՁԲ-1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրի՝ Ընկերության գլխավոր հաշվապահի կողմից չստորագրելը չի կարող դիտվել որպես հայտը մերժելու հիմք:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18.ա կետի համաձայն՝ վճարման պահանջագրի «վճարողի ստորագրությունը» ոչ պարտադիր դաշտը ստորագրվում է վճարողի կողմից, ինչպիսի պահանջը պահպանվել է Ընկերության կողմից, քանի որ այն ստորագրվել է Ընկերության տնօրենի՝ որպես իրավասու անձի կողմից:

Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը, խորհուրդը գտնում է, որ տվյալ պայմաններում «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրի վրա գլխավոր հաշվապահի ստորագրության բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ Ընկերության հայտը նշված հիմքով մերժելու համար:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ տվյալ պայմաններում գլխավոր հաշվապահը ըստ աշխատանքային պայմանագրի պահանջների իրավունք չունեն ստորագրելու տուժանքի մասին համաձայնագիրը, ապա հայտնում ենք, որ Ընկերության գլխավոր հաշվապահը չի լիազորվել ստորագրելու բանկային գործառնությունների հետ կապված փաստաթղթեր, մինչդեռ տուժանքի մասին համաձայնագիրը չի հանդիսանում բանկային գործառնությունների հետ կապված փաստաթուղթ, հետևաբար այն գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված լինելը չի կարող դիտվել որպես ոչ իրավաչափ:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, խորհուրդը գտնում է, որ «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից 29.05.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Շինարար-97» ՍՊԸ-ի 29.05.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել և դադարեցնել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱԱ-ԲԸԱՇՁԲ-1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2017թ. թիվ 2 արձանագրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄԿԵՐ ԱՆԱՆՅԱՆ